

୭୬୮୨୯୫୨



894.362  
U-39





NOV 2011

Ա. Ս Ե Յ Ի Գ Զ Ա Դ Ե

894-362

0-39

ԱՐ




30 JUL 2013

73.885



1531

38



եվ յեղել ե և չի յեղել,  
Մի փայտահատ մարդ ե յեղել.  
Ու լայնածիր աշխարհն արար,—  
Նեղ ե յեղել նրա համար:  
Յոթանասուն հինգ տարեկան,  
Մարմինը վողջ հյուծված այնքան.  
Գլուխը վոնց ճերմակ բամբակ,  
Ուժից ընկած ու յերկու տակ:  
Աշխատում եր սակայն ելի,  
Դարդը շատ եր չքավորի.  
Դիմանում եր ամեն ցավի,  
Ամեն հոգսի ու տանջանքի...  
Նա ամեն որ տնք· տնքալով,  
Արևծագին շուտ զարթնելով,  
Քար· քոլ անցնում հանդ եր գնում.  
Ու իր կացնով փայտ եր կտրում:

Եսպես գործը նա ավարտած,—  
 Տուն եր բերում շալակն առած:  
 Եղ ծերն ուներ յերեք աղջիկ,  
 Յըլդըզ, Նարգիզ, Խումար փոքրիկ,  
 Վորոնց համար պիտ աշխատեր,—  
 Պետք ե նրանց հոգալը քաշեր:  
 Մի առավոտ նորից զարթնում,  
 Տնք-տնքալով հանդ ե գնում.  
 Հետ չի դառնում հանդից ել նա,  
 Չի իմացվում տեղը նրա:  
 Վերջ ե տրվում կյանքին ծերի,  
 Գործն եսպես եր խեղճ թշվառի:  
 Աղջիկները սոված մնում,  
 Նրանք վոչ մի յելք չեն գտնում:  
 Միտք են անում, թե ի՞նչ անեն,  
 Ում մոտ գնան, ումը դիմեն:  
 Վոչ-վոք նրանց չի հասկանում,  
 Նրանց դարդին դարման անում...  
 Ո՞վ եր լսում չքավորին,  
 Ո՞վ եր հասնում նրանց հալին:  
 Նրանց մվ պիտ հաց ու ջուր տար,  
 Խրախուսեր ու միշտ սիրտ տար:  
 Եսպես նրանք խրված դարդում,  
 Գիտեյին վոր այս քաղաքում.  
 Իրենց ցավին մարդ չի հասնի,  
 Ու կման ճանկում սովի...

Առավոտ վաղ, արևծեզին,  
 Հենց վոր լույսն եր հրում մթին.  
 Աղջիկները հանդ են գնում,—  
 Ուտելիք են նրանք վինարում:  
 Ամեն մի կողմ, ման են գալիս,  
 Քար ու քոլին ձեռք են տալիս.  
 Ցեղ վոչ մի բան ել չեն գտնում,  
 Փոքրիկ քույրը՝ Խումարն ասում:—  
 —Ո՞ իմ քույրեր, Յըլդըզ, Նարգիզ.  
 Ցեկեք փորենք գետինն այսպես,  
 Գուցե հողից հանենք մի բան,—  
 Զուր չանցնի մեր, տանջանքն այսքան:  
 Աղջիկները մի քիչ փորում,  
 Հողը հետ-հետ, բաց են անում.  
 Ու ետ ժամին այդքան լարված,—  
 Ձիու վրա Ելդարն հանկարծ  
 Մոտ ե գալիս եղ յերեքին,  
 Ցերեք գունատ պաղ աստղերին...  
 Վորոնք հուզված հողն են փորում,  
 Նրանց խղճում՝ Ելդարն ասում:—  
 —Ետ ինչու յեք եստեղ կանգնել,  
 Վզներդ ծուռ խեղճ ու անել...  
 Զեր յերեսին ամպ ե իջել,  
 Ի՞նչ կա արդյոք, ի՞նչ ե յեղել:  
 Նարգիզն ասաց, —ով յեղբայր մենք,

Սոված, անտուն թափառում ենք.  
Մարդիկ ենք մենք վզներս ծուռ,—  
Անհույս ընկած մենք դռնեղուռ...  
Բարի մարդ եր Ելգարը մի,  
Հասկանում եր ցավը խեղճի.  
Ու նա ժպտաց նրանց գեմքին,—  
Չամիչ տվեց աղջիկներին:  
Աղջիկներն ել ուրախ սրտով,  
Հետ են դառնում, տուն՝ լինդալով:

### III

Յեկ ամեն որ արշալույսին,  
Յերբ արևն եր զարթնում կրկին,  
Ու լույս փռում ավաններին,  
Փայլուն ու ջինջ առուներին...  
Աղջիկները առավոտ վաղ,  
Թռչունների հետ անուշ տագ,  
Չարթնում եյին ու Ելգարից,  
Չամիչ առնում, ապրում նորից:—

### IV

Հիմա յես ձեզ լուր տամ ումի՞ց...  
Լսեք, պատմեմ ձեզ իշխանից:  
Շամախում կար մի մեծ իշխան,  
Արյունարբու, վոնց վոր գաղան  
Կոտորել եր խեղճերին նա,  
Շատ վզեր եր թոցրել նա,



Շատ մեջքեր եր կռացրել.  
Շատ արցունքներ թափել տվել:  
Կախել տվել չքավորին,  
Շատ գլուխներ կտրել կրկին:  
Տարիներով արյուն թափել,  
Ոչ թարխանի անուն ստացել:  
Նրա սիրուն ստեղծված քենից.—  
Անմեղ մարդկանց վոսկորներից,  
Պալատներ եր նա կառուցել,  
Ու պատոհաս եր նա դարձել:  
Նրա պարտեզի վարդերը վառ,  
Հասմիկներն են բյուր հաղար.  
Մանուշակներն են կապուտաչ...  
Կարմիր փայլուն սիրուն կակաչ,  
Շուշանները սրտերով հեգ,—  
Նունուֆարներ՝ վզերը թեք,  
Բաժակները նրա ձեռքի,—  
Զուտ արյունի ու քրտինքի,  
Գնով եր հա ձեռք բերել նա:—  
Տանջանքները հասցրած նրա, —  
Սոսկալի յեր ու շատ դաժան,  
Նողկալի յեր, ո, նա այնքան...

## V

Գաղան Շահը իմ վերն հիշած,  
Անարդ Շահը իմ այս պատմած.

Ուներ յորդա մի Սամանդ ձի,—  
 Հանձնած եր, նա, լավ խնամքի:  
 Այդ Սամանդ ձին, լավ յերթ ուներ,  
 Վագելուց նա՛ թևեր կառներ.  
 Շուտ կթռչեր բազեներից,  
 Կանցներ արագ, քամիներից:  
 Նա չգիտեր, սար ու ձորեր,  
 Բարձրանում եր, բլուրն ի վեր:  
 Հինգ հասակին դեռ նոր հասած,  
 Բազեյի պես թևեր առած.  
 Կրծքին ճերմակ՝ նա խալ ուներ,  
 Մետաքսի պես՝ նա յալ<sup>\*)</sup> ուներ:  
 Շահը նրան շատ եր սիրում,—  
 Սավզա չամչով նրան պահում:

## VI

Շահը մի որ մանում գոմ ներս,  
 Սամանդ ձիուն գալիս ե տես.  
 Տեսնում ձիուն քիչ նվազած,  
 Գոռում ե նա եսպես հանկարծ:  
 — Սա ինչ բան ե, հեյ, լսեցեք,  
 Սպասավորներ եստեղ յեկեք.  
 Տեսեք ով կա ես մառանում,  
 Տեսեք ինչ կա ես կողմերում:  
 Ծառաները խիստ վախեցած:

<sup>\*)</sup> յալ—բաշ

Մոտենում ե մեկը հուղված.—  
 — Յես եմ եստեղ,—ախոռապան  
 Վողջ հրամանին յես միշտ պատրաստ:  
 Գոռզուում ե Շահը կատղած,  
 Բերանը վողջ, փրփուր կալած.—  
 — Ո՞վ դու ստոր, ծառա հիմար,  
 Ինչու յե ձիս եսպես նիհար.  
 Ասա շուտով, սա ի՞նչ բան ե,  
 Հանցավորը ասա, ով ե:  
 Զեռքերը քո՞ կտրել կտամ,  
 Այսոր յես քեզ՝ կախել կտամ:  
 Մոտ ե գալիս ծառան նրա.—  
 — Ո՞ դու վեհանձն մեծ Սուլթան,  
 Սիրտս արնով դու մի լցըռու,  
 Ինձ հանցավոր մի ասա դու.—  
 Գողերն են վողջ պատճառ սրան,  
 Գողացել են նրանք այնքան...  
 Զին յերեք-չորս ամսից ի վեր,  
 Սավզա-չամիչ չի կերել դեռ:  
 Շահն ասում ե,— վատ բան ե շատ,  
 Վոր անիրամն ե արել այդ.  
 Գտեք, կտրեք վիզը նրա,  
 Ու վերջ տվեք, կյանքին իրա...  
 — Ո՞ գթառատ մեծդ Սուլթան,  
 Դեռ չի բռնված դավաճանն այն.  
 Թե վոր կտաս ինձ ժամանակ,—

Յես յերեք-չորս որում արագ.  
 Ուր վոր լինի, թէ յերկնքում,  
 Յերկրի վրա, խոր ծովերում...  
 Զեռք չանցնող բամի լինի:  
 Սրտում յեղած իղձ լինի մի.  
 Թէ հարվածի կայծակի պես,  
 Խանձի բոլոր բարձրունքն այնպես...  
 Կթափառեմ վողջ ճամբեքին,  
 Ու կդտնեմ հանցավորին:  
 Սոսում ե խիստ Շահն են անարդ.—  
 —Գնա, հինգ որ, քեզ ժամանակ,  
 Սրա համար պիտ լուրջ խորհես.  
 Ու այս գործը, գլուխ բերես:

## VII

Մութն անցել եր ու չքացել,  
 Սկսե ամպեր, հետ-հետ քաշվել.  
 Յերկնքում բյուր աստղեր կալին,—  
 Չուգել եյին տիեզերքին:  
 Կապույտ, փայլուն մետաքս ասես,  
 Ամեն աստղ, մի ծաղկի պես.  
 Լուսինն եր լուռ հանդարտ սահում,  
 Ծաղիկների միջով լողում...  
 Հովն եր սուլում, անուշավետ,  
 Զըռցելով ամպերի հետ:  
 Յեկ ամեն ամպ, թռչունի պես,



Թե եր առնում, թռչում եսպես: —  
Վոչ թե միայն ամպ ու թուխպին,  
Կտառապի մարդու հոգին.  
Այլ լուսնկա գիշերին ել, —  
Մարդ հյուծվում ե դարդով անել...  
Գունատ, տանջված ու դալկահար,  
Խեղճ Յըլդըլը, նարգիզ, Խումար,  
Աղջկները իմ վեր հիշած, —  
Գիշերներին լույսով պատաժ...  
Դարդոտվեցին նրանք այնքան,  
Մինչև գտան նորից մառան:  
Նրանց վրա հարձակվեցին,  
Շահի մարդիկն են մոլեգին, —  
Վոր մինչև այդ փնտրում եյին  
Ընկած սար-ձոր, ետ գողերին...  
Լուռ ու լոին, տեսան հանկարծ,  
Յերեք գունատ, աղջիկ կամաց,  
Մոտիկ յեկան ախոռապանին  
— Մի ճար արա. — նրանք ասին:  
Ու նա նրանց դեմքով ժպտուն, —  
Սավզա-չամիչ տվեց իսկույն:  
— Դեռ, գնացեք, բաց ե ճամբան...  
Այդ ժամանակ տեսնում նրան, —  
Դուրս են գալիս կողքից հանկարծ,  
Մառաները խիստ կատաղած:  
— Դավաճան մարդ, ինչ ես անում,

Մտածիր տես, ումն ես խաբում.  
 Զես վախենում, միթե Շահից,  
 Մեր վեհապանձ, Թագավորից:  
 Փուչ աղջիկներ, ձեզ ենք հարցնում,—  
 Դուք եք եղած չամիչն ուտում,  
 Ել ձեզ պըճնում չկա Շահից,  
 Հետ չեք դառնա դուք տուն նորից:  
 Յըլդըզ, Նարգիզ, Խումար փոքրիկ,  
 Կանգ են առնում լոիկ-մնջիկ...  
 Գործը շատ վատ ընթացք առավ,  
 Ծառաներից մեկը յեկավ.  
 Զեռն ու վոտը կապկպելու,  
 Ոձ Թարխանի մոտ տանելու,  
 Խումարը դառն լաց յեղավ, շատ,  
 Ու Յըլդըզն ել շատ եր գունատ.—  
 Ան եր նստել նրանց սրտում,  
 Բայց Նարգիզը չեր վախենում:  
 Ուշք չըդարձնելով գոռ-գոռոցին,—  
 Ասաց եսպես՝ ծառաներին:  
 —Մի շտապեք, դեռ մի կացեք,  
 Մենք գնալու ճամբա չունենք.  
 Ի՞նչ ե յեղել, հո չենք վախչում,—  
 Թևեր առած հո չենք թոչում...  
 Շատ հեշտ բան ե բռնելը մեզ,  
 Թույլ տվեք մի, խոսք ասեմ ձեզ:  
 Իմացեք վոր գիտունները,

Կճանաչեն, ընկերները.  
 Կճանաչեն և թշնամուն,  
 Զեն պղտորի իրար արյուն...  
 Արդարադատ յեղեք մի քիչ,  
 Լավ հասկացեք դուք ամեն ինչ:  
 Ծառան ասաց, —սուս, անպիտան,  
 Յես խղճացողը չեմ այնքան.  
 Շատ մի խոսիր արդար դատից,  
 Զեք ազատվի դուք ինձանից:  
 Զեր յերեքի կաշիներն ել,  
 Վողջ մի առ մի պետք ե քերթել.  
 Ու գարմանով լցնել պիտի,—  
 Նետել գիրկը՝ բարկ կըակի...  
 Դեհ, շուտ, դեհ շուտ, առաջ անցեք,  
 Դուք բոլորդ ել բանտարկված եք:  
 Յըլդըզ, Խումար, Նարգիզ, Ելդար,  
 Լուռ քայլեցին, հոգնած, դանդաղ:

### VIII

Նստել եր ժանդ ոձ Թարխանը,  
 Յերբ մոտ յեկավ ժանդ Ասլանը,  
 Խոնարհելով գլուխը ցած,  
 Համբուրելով հողը կամաց,  
 Հազար մի հետ բարե տալով,—  
 Եսպես ասաց հետ քաշվելով:  
 —Ո՞վ ծերունի մեծդ Սուլթան,

Վեհանձն դու մեծդ Սուլթան—  
 Գողերն արդեն գտնված են,  
 Նարգիզ, Ելդար բանված են:  
 Հրաման տաք ներս կըերեմ,  
 Զեր մեծության ներկայացնեմ...  
 Ոչ Թարխանը բարձր ճշաց,  
 Վեր ցատկելով տեղից հանկարծ.—  
 —Դեհ շնուտ արա, դէ շուտ Ասլան,  
 Բեր մի տեսնենք Ելդարն ով ե,  
 Նարգիզ, Յըլդըզ, Խումարն ով ե...  
 Ու ծառաներն են անյերես,—  
 Նրանց մեկ մեկ բերեցին ներս:  
 —Դահիճ-դոհիճ, —Թարխանն ասաց,—  
 Յեկ դու վերջ առւր շուտով սրանց:  
 Խոնարհելով գլուխը ցած,  
 Յեկավ մեկն ու եսպես ասաց—  
 —Ո՛ դու մեծդ զմոտ Սուլթան  
 Ասա վերջ տամ իսկույն նրան,  
 Ով ե կյանքից շուտ կշտացել,  
 Այս աշխարհից ձեռք ե քաշել...  
 Շահը մեկնեց ձեռքը նրանց,  
 Բոնվածներին են լուռ կանգնած:—  
 —Ահա սրանց վերջ պիտ դնել,  
 Գլուխները՝ պետք ե կտրել՝  
 Նարգիզն ըզգաց, գործը վատ ե,  
 Յերկինքը շատ ամպամած ե...

Ասաց, —ո՞ դու մեծդ Սուլթան,  
 Զուր մի թափիր արյուն այդքան:  
 Զեմ վախենում յես մահվանից,  
 Վոչ ինձ հասցրած, —տանջանքներից...  
 Բայց յեթե դու մեզ սպանես,  
 Ոգուտ չի գա զրանից քեզ:  
 Իսկ յեթե մեզ դու բաց թողնես,  
 Շատ ոգուտմներ դեռ կտեսնես...  
 Թարխանն ասաց, —Ո՛ վավաճան,  
 Աղջիկ մարզող աստղի նման.  
 Ասա աեմնեմ ինչ ոգուտներ,  
 Կարաս բերել դու ինձ համար:  
 Նարգիզն ասաց, —յես քեզ համար,  
 Հուլունքներից գույնով հազար,  
 Վոսկի, ալմազ, քարից անդին, —  
 Սուր կկռւմ մի թանկագին...  
 Յեթե դու վողջ աշխարհ շըջես,  
 Ո՛, ասում եմ վստահ յես քեզ,  
 Վոր չես գտնի յերկրի վրա  
 Հատը նրա, հատը նրա...  
 Թարխանն ասաց —Ելդար ասա,  
 Դու ինչ արհեստ ունես հիմա:  
 Ելդարն ասաց, —քեզ համար յես,  
 Կպատրաստեմ վահան ենպես,  
 Են Հնդկական փղի կաշվից.—  
 Նա իր հատը չի ունենա,

158/  
39

Անգին մի բան կլինի նայ:  
 Թարխանն ասաց, — Խումարը մի տես,  
 Դու բնչալիսի արհեստ ունես:  
 Խումարն ասաց, — ո իմ Սուլթան,  
 Յաղութ, զմրուխտ, լալ ու մարջան,  
 Իրարու հետ նուրբ կհյուսեմ,  
 Քեզ մի գոտի կպատրաստեմ.  
 Վոր չլինի հատն աշխարհում...  
 Ո՛, հավատա, սուտ չեմ ասում:  
 — Ո՛ դու Յըլդըզ, — Թարխանն ասաց, —  
 Մենակ դու յես կեցել կանգնած  
 Թագավորի առաջ եղակես, —  
 Ասա դժու ինչ արհեստ ունես:  
 Յըլդըզն ասաց, — Ո՛ թագավոր,  
 Յես քեզ համար նուրբ ծաղկավոր  
 Գորդ կգործեմ մետաքսներից, —  
 Ամեն նախշը, մի կոկոնից...  
 Վոր չունենա հատը իրա,  
 Ու աննման բան լինի նայ:  
 Շահը անչափ, խիստ ագահ եր,  
 Զվից անգամ՝ բուրդ կխուզեր:  
 Տեսավ այստեղ, վոր ոգուտ կա,  
 Իրեն վոչ մի ֆաս չի դա.  
 Թե գողերն ել մնան կենդան...  
 Ու միտք արեց սև ոձ թարխանն...  
 — Սպանելուց սրանց հիմի,

Վոր հետ կանգնեմ, վատ չի լինի.  
 Ու կսպասեմ մինչ մի տարին. —  
 Հետո վերջ տամ՝ գերիներին...  
 Եսպես կառնեն պատիժն իրենց,  
 Լավ կլինի եսպես ել հենց:  
 Յեվ նա ասաց—դեհ, գնացեք,  
 Զեր գործերը՝ կատարեցեք.  
 Յըլդըզ, Նարգիզ, Ելդար, Խումար,  
 Հսկողության տակ եք յերկար...  
 Գորգն ու գոտին, վահան դաշույն,  
 Պատրաստ լինի՝ մինչև գարուն:

## IX

Յերեկո յեր ջինջ ու կապույտ,  
 Սիրահամբույր յերեկո լուրթ...  
 Ստվեր ընկած կանաչ սարին,  
 Ու խոխոջուն առուներին.  
 Ծաղիկներին ու թփերին,  
 Յեվ ամեն ուր, ամեն ինչին...  
 Բարձր սարի մյուս կողմում,  
 Ծաղիկների քնքուշ գրկում.  
 Նստած եր մի թշվառ չոբան,  
 Ծանր դարդով լցված այնքան:  
 Շուրջը լցված բյուր վոչսարներ,  
 Աչքը հառած՝ լուռ հեռուներ,  
 Դարդոտ-դարդոտ, սրինգ ածում,  
 Մի հոգեթով յերգ եր ասում:

Հառաջանքներ՝ սրնգից հոսող,  
Հառաջանքներ՝ սրտեր հուզող.  
Հորիզոններ կտրում, անցնում,  
Ու տարածվում հեռուներում...  
Մինչ բյուրեղյա պարզ առուներ, —  
Դղրդում եր, սար ու ձորեր...

## X

Շահն յելել եր եղ որ վորսի,  
Խմբով հարյուր ու տաս հոգի.  
Սարդար, ծառա, Նայիր, զինվոր,  
Զիաներով՝ թոշկուն բոլոր, —  
Մի ծաղկոցի յեկան հասան,  
Զիաներից նրանք իջան...  
Հանգիստ առնեն մի քիչ ենտեղ, —  
Մաղիկների մեջ գունագեղ...  
Թիկն տալով Շահը պարկեց  
Թավ կանաչին՝ ու խոժոռեց:  
Մընգի ձայնն ալիքներով...  
Տարածվել եր վողջ հանդերով...  
Շահն այդ ձայնը հենց վոր լսեց,  
Զար նախանձից, սիրտը հուզվեց:  
Ասաց, — եսպես մեղմիկ մեղմիկ,  
Ասես մեղնից ել շատ մոտիկ,  
Այրող սրինգ ածողն ով ե,  
Սար ու ձորեր հուզողն ով ե...  
Դեհ, շուտ արեք, արագ հասեք,

Սրանից ինձ մի լուր բերեք:  
Ծառաներից հինգ-վեց հոգի,  
Իսկույն թռան, յելան վոտքի:  
Ընկան նրանք խոր-խոր ձորեր,  
Բարձրացան դիք լեռներն ի վեր,  
Ծաղկանց միջում տեսան նստած,  
Մի հովիվ կար, մտքով տարված...  
Նա յեր ածում սրինգ անգին,  
Եղպես դյութիչ ու քնքշանգին:  
Նրանք յեկան հետո Շահին,  
Տեսածն իրենց՝ վողջ պատմեցին.  
Խիստ վրդովվեց Շահն ես բանից,  
Ոձի լեզվով՝ խոսեց նորից...  
— Զոբաններին եղ անպիտան,  
Ո՞վ ե տվել շնորք եղքան.  
Զոբանն արդյոք եղ յերբանից,  
Դարձավ խոսող հոգուց, սրտից...  
Զոբանն ինչ ե, նվազելն ինչ,  
Դուր չի գալիս եղ բանը ինձ:  
Դեհ, իմ քաջեր, շուտ վեր կացեք,  
Գնացեք նրա ձայնը կտրեք,  
Ու մեկ ել յես շատ եմ սոված,  
Յերբ վոր իջնեք սարերից ցած.  
Ու հետ դառնաք նորից եստեղ,  
Մի հինգ տաս հատ վոչխար բերեք. —  
Վոր մեզ համար՝ խորոված անեք. —

Ծառաներից չորս-հինգ հոգի,  
 Արագությամբ հուր կայծակի.  
 Շուտ սլացան չոբանի մոտ,—  
 Խուսք նետեցին, դառն ու քինոտ...  
 — Ա՛, դու տխմար, հիմար, չորան,  
 Ի՞նչ ես եղակես նստել անբան.  
 Գիշեր-ցերեկ սրինգ ածում,  
 Ու ածելուց չես կշտանում...  
 Չես տպիս՝ դու խալխին հանգիստ,  
 Զուր հուզում ես ամեն մի սիրտ:  
 Բա չգիտես Սուլթանն արդեն,  
 Հետ ե գարձել իրեն վորսեն,  
 Վրաններ ե խփել տվել,  
 Ես՝ մոտերքում հանգիստ առել...  
 Լոիր, վերջ տուր քո նվագին,  
 Դուր չի գալիս ձայնդ Շահին:  
 Մի քանի հատ վոչխար տուր մեզ,  
 Զաղ տեղերից ջոկիր տուր մեզ.  
 Հրամայել ե մեծն Թարխան,  
 Հասկացար դու, տխմար չոքան:  
 Չոբանն առաց, — Թարխանն ով ե.  
 Չեմ ճանաչում, Սուլթանն ով ե.  
 Չեմ տվել յես վոչ մեկին տուրք,  
 Յես նրան ել չեմ տալու հարկ:  
 Շահի հուզված ծառաները,  
 Վրա ընկան դեպ չոբանը,

Գոռ գոռոցով մի խենթագին, —  
 Զեռք պարղեցին դաշույններին...  
 Զոբանն առավ մահակն իրա,  
 Ու հարձակվեց, նրանց վրա.  
 Ծառաները մի հարվածից, —  
 Գալարվելով, կաղան գետնից:  
 Բայց նրանցից մեկը վախավ,  
 Շունչը կտրած յեկավ, հասավ  
 Նա հիվ ի հիվ, վրաններին,  
 Յեղածը վողջ՝ պատմեց Շահին:  
 Շահը գոռաց, — պահ, պահ, միթե,  
 Զոբանն եղքան ուժի տեր ե.  
 Ու հանդունգն ե միթե եղքան...  
 Դեհ, զուտ հասեք, բռնեք նրան,  
 Բերեք եստեղ եղ տխմարին,  
 Եղ անիրավ Փարավոնին.  
 Յեվ քառսունհինգ ծառա, զինվոր,  
 Զեռքին բռնած սրեր բոլոր.  
 Շտապ կարգով սար դիմեցին,  
 Բոնեն, բերեն խեղճ չոբանին:  
 Յերբ չոբանը տեսավ նրանց,  
 Մզրախ ու սուր ձեռքին բռնած,  
 Հարձակվում են իրեն վրա,  
 Նա յել վերցրեց մահակն իրա,  
 Հետ-հետ տալով վոչխարներին, —  
 Դեմ դուրս յեկավ ծառաներին! —

Զոբանը մի լավ շուն ուներ,  
 Վորը վագրի շատ նման եր.  
 Առյուծի պես ճանկեր ուներ,  
 Նրան առյուծը՝ խաղալիք եր...  
 Գազանները նրա տեսքից, —  
 Փախչում եյին խոր սարսափից:  
 Մուր ճանկերը՝ դաշույնի պես,  
 Յեղունգները՝ ալմազի պես  
 Ատամները՝ մզրախի պես.—  
 Հուր եր թափվում տեսքից ասես.  
 Շունը չոքանին շատ եր սիրում,  
 Հենց վոր մեղմիկ սուլոց լսում,  
 Գիտեր վոր նա շատ ե նեղվել,  
 Դուշման մարդու ճանկ ե ընկել:  
 Արագ-արագ մոտ կվազեր,  
 Յեվ ոգնության նա կհամներ:  
 Շունը մտած քարի տակին,  
 Հենց վոր տեսավ յեկվորներին.  
 Մոտիկ վազեց հաջելով նա,  
 Ու հարձակվեց նրանց վրա:  
 Քառասուն հինգ սե ոձերը մեկ,  
 Շունն ու չոքանն ել դարձած մեկ.  
 Բռնվեցին ուժեղ կռվի, —  
 Քլորեցին իրար մի մի...  
 Շունը հենց վոր մեկի վոտից  
 Թափ եր տալիս ուժգին նորից.

Առվի նման արյունն հոսում,  
 Պաղ գետինն եր նա չանկոսում:  
 Չորանն ում վոր հարվածում եր,  
 Նրա կյանքը խավարում եր.  
 Զեռն ու վոտը նրանց բոլոր,  
 Խաշխաշի պես՝ դառնում փշուր...  
 Նայիբներից, — Թողլուկ, Որիսան,  
 Ծառաներից, — Ողուզ, Զաման.  
 Արված եին պատառ պատառ,  
 Անցել եին եղածին իրար, —  
 Ու հասկացել, վոր չարիքի  
 Վերջը եղածին պետք ե լինի...  
 Շունն ու չոքան համառ կռվից,  
 Խիստ ուժասպառ՝ ընկան հալից.  
 Արյունվաքիթ ու յերես, —  
 Բոնվեցին նրանք եսպես:  
 Ծառաները Շահի անարդ,  
 Հետ դառնալով արագ արագ,  
 Վողջ պատմեցին նրանք մի-մի, —  
 Արյունոտվեց, սիրու Շահի...  
 — Տիմար չոքան, մահ ես ուզում,  
 Քո սահմանից դուրս ես գնում.  
 Դեմ ես յելնում Թագավորին,  
 Քո վեհանձն մեծ Յուլթանին:  
 Քեզ ենպիսի մի պատիժ տամ,  
 Ես քեզ ենպես սպանել տամ.

Վոր սուրբ անեն վողջ քեզ համար,  
 Արնով լցվի արար աշխարհ...  
 Դու ասացիր, վոր չեմ տա հարկ.  
 Հասցըեք արան՝ հինգ հարյուր զարկ,  
 Հենց հրաման տվեց եղանակ,  
 Ծառաները գազանի պես.  
 Իսկույն նրան փոխն գետին,—  
 Հինգ հարյուր զարկ մտրակեցին:  
 Խեղճ չոբանը ուժից ընկավ,  
 Գունատվեց ու լեզուն կտրավ:  
 Ո՛ սոսկալի դրություն եր այդ,  
 Յերբ վոճրագործ մարդիկ այդ ժանտ  
 Տեսան չոբանը վոնց վոր մեռած,—  
 Ուրախացան հպարտացած,—  
 Հեծան ձիերն ու հետ դարձան,  
 Թևեր առած, շուտ սլացան:  
 Չափ չափ տալով հենց նույն ճամբից,  
 Վորսի յելան նրանք նորից...

## XI

Խոսում եյինք մենք Նարգիզից,  
 Հարցնում եմ յես հիմա ձեզնից.—  
 Նարգիզը մեր՝ են մուր մնաց,  
 Ցըլդըզը մեր՝ վհրտեղ գնաց...  
 Փոքրիկ Խումարն են մուր մնաց,  
 Ելդարը քաջ՝ վո՞րտեղ գնաց...  
 Ո՛, յես գիտեմ, վոր տակավին,

Լուռ չգիտեք դուք եղ մասին:  
 Սակայն յես լավ գիտեմ հաստատ,  
 Վոր մեր անվախ հերոսներն այդ.—  
 Ցըլդըզ, Նարգիզ, Խումար, Ելդար,  
 Ի մի ձուլված ասես իրաբ.  
 Են որ շահին խիստ խաբեցին...  
 Ու գիշերվա մի մութ պահին,  
 Փախան նրանք հեռու մի գյուղ.  
 Ույժ հավաքեն ու անյերկյուղ,  
 Խեղճ ու թշվառ վողջ միասին,—  
 Դուրս գան հանդեպ՝ անդութ Շահին:

## XII

Արեի ալ շողերը վառ,  
 Զուգել եյին աշխարհն արար.  
 Հորիզոնը վոսկի հագին,  
 Շղարշի մեջ մի քնքշագին...  
 Շիկացած զառ վարդի նման,  
 Փայլ-վիում եր սիրով այնքան:  
 Զեփյուռը մեզմ ու անուշիկ,—  
 Ամպերին եր քշում մեղմիկ.  
 Ամպերին վոնց ճերմակ բամբակ,  
 Քշում, տանում դեպ արևմուտք...  
 Եսպես սիրուն մի ժամանակ,  
 Հերոսները մեր համարձակ  
 Բազեյի պես ձիեր նստած,  
 Թռչում եյին, թևեր առած...

Ինչպես հողմեր՝ բլուրներից,  
 Ինչպես հեղեղ՝ խոր ձորերից.  
 Քաջ Նարգիզն եր ճամբա գնում;—  
 Սար ու ձորեր, կտրում, անցնում:  
 Խաղացնելով իր բազե ձին,  
 Յեկավ հասավ ծաղկուն սարին:—  
 Առաջ չանցավ ել ձին նրա,  
 Խրխնջալով՝ կանդ առավ նա:  
 Ու Նարգիզն ել զարմանք կտրած,  
 Դարձավ նրան՝ եսպես ասաց.—  
 —Ի՞նչ կա ելի, իմ գիշ նժույզ,  
 Քո աչքերին ժիր ու առույզ  
 Արդյոք ելի ի՞նչ յերևաց,  
 Ի՞նչ ես նայում դու շփոթված:  
 Սակայն կապույտ ձին անդադրում,  
 Խրխնջում ու սանձն եր ծամում:  
 Ու Նարգիզն եղ բանի վրա,  
 Աչք եր ածում՝ շուրջը իրա...  
 Մեկել տեսավ մի մարդ ընկած,  
 Չեռն ու վոտը արնով պատած.  
 Իսկույն ձիուց նա ցած իջավ,  
 Վիրավորին, նա մոտ յեկավ:  
 Տեսավ, վոր նա մի չորան եր,  
 Դեմքը ասես՝ մեռելի յեր...  
 Մարմինը վողջ շերտ-շերտ արած,—  
 Միրտը հիվանդ ու տառապած...

Շունչ եր քաշում նա հազիվ-հազ,  
 Արնով թրջած՝ թվերը խաս...  
 Նարգիզն արագ, վազեց ձիուն,  
 Ու բաց արեց խուրջինն իսկույն.  
 Ենտեղ պահած դեղ ուներ մի,  
 Բուժում եր, նա ամեն վերքի...  
 Յերբ եղ դեղը նարգիզն առավ,  
 Մաքերի մեջ նորից ընկավ...  
 —Վոր այս վերքը շուտ լավանա,  
 Գործը վատով չվերջանա,  
 Դեռ վերքը պիտ լվամ այնքան,  
 Յեվ հետո դեղ՝ գնեմ վրան:  
 Նարգիզն եսպես ճարը գտավ,  
 Վերքի վրա՝ դեղը դրավ...  
 Մրտումը լի խորունկ վշտեր,  
 Անվերջ թախիծ, անվերջ հոգսեր...  
 Նստեց նորից ձիուն թռչկան,—  
 Արշավելով հողմի նման.  
 Մի շարք բարձր լեռներ անցավ,—  
 Յեկավ գյուղին՝ նա մոտեցավ:—

### XIII

Յերբ մթնաշաղն եր հետ քաշվում,  
 Լուսաստղը վառ՝ նորից փայլում.  
 Վոնց ստրուկներն անարդ բեգի,—  
 Խեղճ գյուղացիք գնում գործի:  
 Վորոնք նրա, հողն են փորում,


Վորոնք նրան-հերկ են անում.  
 Արոր լծում, մաճ են բռնում,  
 Աշխատելով՝ հալից ընկնում...  
 Արում քրտինք են թափում հա,  
 Մարդիկ զրկված, ճորտերն նրա.—  
 Աշխատելով գիշերն ի բուն,  
 Մրտերի մեջ զայրութ անհուն.  
 Արևուտին հոգնած, դադրած,—  
 Հայացքներով պաղ ու սառած...  
 Հետ գալիս առւն նրանք նորից,  
 Վշտահար ու հյուծված սովից:  
 Եդ խեղճերը ինչ ցանելին,  
 Մեկիկ-մեկիկ կկալսելին  
 Արյունախում բեգերը ժանտ,—  
 Կթողնելին նրանց վհատ...  
 Իսկ մեր անվախ, քաջ հերոսներ,  
 Նարգիզ, Յըլղըզ, Խումար, Ելդար,  
 Թշվառների վիշտն անդադար.—  
 Կրում ելին սրտեռում վառ...  
 Նրանց կյանքը այնքան խավար,—  
 Ծանր լուծ եր, նրանց համար:  
 Հալածանքից, բյուր, անհատնում,  
 Նրանց արյունն եր սևանում...  
 Ատում ելին նենդ բեգերին,  
 Այդ անիրավ հարուստներին.  
 Վոր զրկելով խեղճ գյուղացուն, —

Ապրում ելին, իրենք խնդուն:  
 Տածում ելին դեպի նրանց,  
 Ատելություն, զզվանք անսանձ:  
 Մի իրիկուն, Նարգիզը ուշ,  
 Աչքերի մեջ, մեզ ու մշուշ.  
 Մի կես մղոն գյուղից անդին,—  
 Շուրջն հավաքեց, թշվառներին:  
 —Ո՞վ ընկերներ, հերիք լոեք,  
 Հերիք վորքան դուք վիզ ծռեք.  
 Ամեն մի խան, կալվածատեր,  
 Վոճրագործ ու ոձ Թարխաններ...  
 Տարիներով ձեզ միշտ քերթել,  
 Ազատ կյանքի, կարոտ թողել.  
 Ել հերիք ե վիզ ծռել ձեզ,  
 Գերի դառնալ, կուչ գալ եսպես...  
 Փշբեք շղթան, ու գեն գցեք,  
 Դեհ շուտ յելեք, ապստամբեք:  
 Ապստամբեք՝ ոձ Թարխանին  
 Ապստամբեք՝ դեմ բեգերին...  
 Գյուղացիներն ասին եսպես.—  
 —Ո՞վ դու քաջդ, անհաղթ Նարգիզ,  
 Ես որվանից քեզ հետ ենք մենք,  
 Բռնօւթյունը վոր տապալենք...  
 Քեզ հետ մեկ տեղ պայքարելով,  
 Ամեն հարված՝ տանենք սիրով:  
 Որը-որի. Շահն արնախում,

Ագահաբար, ճամբից շեղվում.  
 Բոնությունը սահման չունի...  
 Քյաղիսուղեքը մեր գյուղերի,—  
 Ժողովրդին իսպառ քերթում,  
 Վազիլ վազիր, արյուն թափում...  
 Վիշապներն ու առյօնները,  
 Խենթ փոթորիկն ու փղերը.  
 Կայծակների զարկն ահավոր,  
 Սարսափները յերկրի բոլոր...  
 Արհավիրքը վող բնության,—  
 Սոսկալի չեն անգամ այնքան...  
 Վորքան սրանց տանջանքները:  
 Պիտ տապալել բոնությունը...

#### XIV

Ծառաները անգութ խանի,  
 Եսոր նորից յելել վոտքի,  
 Կատաղել են իրար անցել,  
 Ելի գյուղում՝ խնջույք սարքել...  
 Հայհոյում են, ծեծում մարդկանց,  
 Մերկացնում, քերթում նրանց.  
 Ագահորեն, խփում ջարդում  
 Անարգում ու սոված թողնում...  
 Զեռքերին փայտ, սուր ու մարակ,  
 Հավաքում են նրանցից հարկ.  
 Ամեն կողմում սարսափ ու ահ,—  
 Փոթորիկ ե, սոսկում ու մահ...



Խըճիթներից խարխուլ ու ցած,—  
Բարձրանում են կանչեր ու լաց...  
—Խփիր, ջարդիր դավաճանին,  
Ճամբից շեղված մոլորվածին,  
Վոր մոռացել ե նա հիմա,  
Հավատ, կրոն, ամոթն իրա:  
Ասում ե թե, —հարկ չեմ տալու,  
Խան ու բեգին չեմ լսելու  
Մեծ Սուլթանին, նրա խոսքին,  
Դարդը ցած գա, նրա բկին...  
Ասաց Թառլանն ու կատաղեց,  
Մի գյուղացու, ծեծել տվեց,  
Մտրակների հարվածներից,—  
Խեղճ Սուսանը՝ կծկվեց ցավից...  
Դարդոտ-դարդոտ լաց եր լինում,  
Յերկինք, գետին մղկտացնում:  
—Ցնորամիտ ո՞ կի՞ն դու ծեր,  
Դե՞հ շնուտ արա, ցորենը բեր.  
Դուրս կքշեմ յես քեզ գեղից,  
Ու կհանեմ աչքդ տեղից:  
Գոռգոռում եր Թառլանն եսպես,  
Նարգիզն հանկարծ՝ մտնում ե ներս:  
—Ո՞ մոլորված, անմիտ Թառլան,  
Հերիք արյուն թափես այդքան.  
Ժողովրդին, զրկես, նեղես,  
Ունեցածը՝ ձեռքից խլես...  


Դու ավելի սարսափելի  
Պատուհաս ես դարձել հիմք:  
Հերիք հանես դու մեր հոգին,  
Հերիք տանջես, անմեղ խալխին...  
Խենթ փոթորիկն եղ քո բերած,  
Քեզ կխեղղի մի որ հանկարծ...

XV


Քեֆ կար նորից պալատի մեջ,  
Յերգեր ու պար, խնջույք մի մեծ.  
Սրտեր՝ հուզող ձայնը թառի,  
Մեղմ նվոցը՝ քյամանչայի...  
Ալիքներով որոր-շորոր,  
Տարածվում եր, շուրջը բոլոր:  
Մի կողմում լի բյուր բաժակներ,  
Ու մյուս կողմում, շատրվաններ.  
Խան ու բեգերն արյունառուշտ,  
Նստել եին տոգած ու կուշտ:  
Նրանց շուրջը հազար ձայներ,  
Անուշաբույր ալ-գույն վարդեր.  
Բյուր սոխակներ, սիրահամբույր,  
Ալմաստ փայլով, շատ նետ ու սուր...  
Մի կողմում նուրբ մանիշակներ,  
Ու քնքշահլուս նուրբ շղարշներ,  
Մյուս կողմում, վահան, մահակ,  
Պալատն ասես, մշուշի տակ...  
Այնտեղ կային արհամարդած,

Շատ աղջիներ, գունածտ, հյուծված,  
Դարդոտ-դարդոտ նայում եյին,  
Աստղի նման սահում եին...  
Մի կողմում լի արնոտ մտրակ,  
Սաղավարտներ, դեմքեր, անարգ.  
Իշխան, վեզիր իրար անցած,  
Աչքերի գեմ արյուն կալած...  
Ման են գալիս խենթերի պես,—  
Գոռգոռում ե Թարխանն եսպես:  
—Շնւտ մատրվակ, ըմպելիք բեր,  
Արքենք, յելնենք յերկինքն ի վեր,  
Վոր դրա մեջ միշտ լող տանք մենք,  
Աստղերից ել շատ հարկ առնենք...  
Ըմպելիք բեր դե'ն շուտ դու ինձ,—  
Յերկինք, գետին, իմն են նորից:


XVI

Զյեռն անցել, յեկել գարուն,  
Խոխոջում եր գուլալ առուն.  
Սարերն առանց ճերմակ քողի,—  
Անցել գիրկը՝ սեզ ու ցողի...  
Զյունն արևից հալվել իսպառ,  
Զուգել կանաչ լանջերը վառ...  
Անուշաբույր մանուշակներ,  
Նարգիզներ ու կարմիր վարդեր.  
Սար ու ձորեր ծաղկել եյին,  
Ու քնքշագին, ժպտում եյին...

Լիճը նման ալ մախմուռի,  
 Շուրջը դալար, կար շատ ուսի...  
 Տարվա սիրուն հենց եղ պահին,  
 Գեղածիծաղ վառ գարունին.  
 Հերոսները մեր տենչավառ,  
 Յըլդըզ, Խումար, Նարգիզ, Ելդար.—  
 Հավաքելով տաս հազար մարդ,  
 Չեռներին ալ դրոշ մի վարդ...  
 Յեկ մեջքներին սուր ու սուսեր,  
 Շարք-շարք անցնում սար ու ձորեր...  
 Սարից իջնող խենթ հողմի պես,  
 Չորից անցնող հեղեղի ասես.  
 Նման այրող հուր կայծակի.—  
 Գնում եյին՝ պատերազմի...  
 Նրանք ամեն մի գյուղ մտնում,  
 Բոնակալին բանտը նետում.  
 Բոնում եյին խան ու բեգին,  
 Ամուր չոքում, նրանց բկին:  
 Գյուղում վորքան վոր չքավոր,  
 Մարդիկ կային խեղճ ու մոլոր.  
 Գալիս եյին ու ժպտաղեմ,—  
 Կանգնում եյին Նարգիզի դեմ...  
 Ու միանում նրա խմբին,  
 Կովի յելնում՝ դեմ խաներին:  
 Յըլդըզ, Խումար, Նարգիզ, Ելդար,  
 Ապաստամբներն այդ տենչավառ.



Շատ գնացին, քիչ գնացին,—  
Քեֆերը սազ, նրանք գնացին:  
Յերեկոյան մեկ ել մի որ,  
Բանակն յեկավ ու հեռավոր  
Տափաստանում կանգնեց հանկարծ,—  
Իջան մեկ-մեկ ձիերից ցած:  
Յեկ նստեցին լուրջ խորհրդի  
Նարգիզն ասաց,—լսեք հիմքի,—  
Եստեղից մինչ քաղաք դեռ մեզ,  
Չորս մզոն կա, ասում եմ ձեզ:  
Պետք եւ վոր քիչ հանգստանանք,  
Ու ձիերին լավ կեր պիտ տանք.  
Արևն անցնի. խավարն իջնի,  
Յերկինք, գետին մշւթով պատի...  
Անգութ խանի ծառաներն ել,  
Խոր քուն մտնեն մի անարգել.  
Շուտ վրա տանք մենք քաղաքին,—  
Վոր վերջ տրվի մեր տանջանքին...  
Ամեն մի հարց եսպես լուծենք,  
Ուժ Թարխանին, շուտ ձեռք զցենք:  
Այս մտքին շատ հավան կացան—  
Ապւտամբները վողջ միաձայն.  
Վորոշեցին մտնել եղտեղ  
Վերջ տալ խան ու բեգին ահեղ...  
Կամաց կամաց արևն անցավ,  
Յերկոն լուր, հանդարտ իջավ,



Յաղութագույն հորիզոնին,—  
 Խավարն իջավ, ծածկեց կրկին...  
 Ապստամբներ, Նարգիզ, Ելդար,  
 Հնկած ճամբեն՝ ձիգ ու յերկար.  
 Հենց վոր հասան նրանք քաղաք,—  
 Հարձակվեցին արագ արագ  
 Զորս կողմերից. զինվորների,  
 Զորքի վրա, անգութ Շահի:  
 Եղ գործը մեծ ընթացք առավ,  
 Ծառաներից լուրը հասավ,  
 Հրամանատար Մախմուդ խանին.—  
 Բորբոքվեց նա, խիստ մոլեգին...  
 Ծառաներին իր մոտ կանչեց.  
 Եսպիսի մի հրաման տվեց.—  
 — Դեհ շուտ առեք նետ ու աղեղ,  
 Սուր ու սուսեր, զենքեր ահեղ,  
 Շուտով հասեք դեպ ամրոցներ,  
 Դեպ անսասան մեր պարիսպներ...  
 Խան ու բեգեր, զենքեր առած,  
 Կովի յելան խիստ կատաղած...  
 Ու բռնկվեց կոփին հանկարծ,  
 Դաշտն ասես կրակ հագած:  
 Ձեռք գցեցին նրանք թրերին,  
 Վահաններին ու նետերին.  
 Իրարանցում յեղավ ենտեղ,  
 Ու շաշեցին սրերն ահեղ...

Վահանների զրանգ-զընգոց,  
 Դաշույնների փայլ-փայլփլոց...  
 Քչքչալով արյունն հոսում,  
 Նետ ու աղեղն եր վզվզում...  
 Մեռնողների տիսուր նվոց.  
 Զիւ դոփյուն ու խբինջոց...  
 Թմբուկների ձայներ ուժեղ,  
 Գոռում, գոչում եր ամեն տեղ:  
 Եղ ձայներից հողը թնդաց,  
 Անձրեսի պես նետեր տեղաց.—  
 Յերկինք պատեց. յերկիր պատեց.  
 Խոր անդունդներ, ծովեր լցրեց...  
 Արյունն հոսեց գետերի պես,  
 Մահակների հարվածից կեզ,  
 Գլորվեցին բյուր հազար մարդ,  
 Դիակ լցվեց, սար, քար, ու հանդ...  
 Շառաչյունից վահանների,—  
 Վեր բարձրացավ, հուր ու փոշի:  
 Դաշույններից ալմազի պես.  
 Կրակ տեղաց. կարկուտ ասես...  
 Հերոսների հաղթ ձայներից.  
 Յերկինք, գետին թնդաց նորից:  
 Կրակ ցատկեց թրից նրանց,  
 Յերկրագունդը ասես հանկարծ  
 Փոխեց մեկեն ընթացքն իրա.—  
 Արյուն մաղվեց, յերկրի վրա...

Կակաչագույն շոշ-շիթերից,  
Կարմիր արև ծագեց նորից.  
Ու լույս սփռեց սար ու հանդին,  
Կապուտաչյա խոր ծովերին...  
Մեր հերոսներն եղ տենչավառ,  
Յըլդըզ, Խումար, Նարգիզ, Ելդար,  
Թշնամու դեմ մարտի յելած:—  
Տապալեցին իսպառ նրանց...  
Ու եղ կովից քաջ ու անպարտ,  
Դուքս յեկան հաղթ ու բաց ճակատ:

## XVII

—Շուտ մատրվակ, ըմպելիք բեր,  
Արբենք յելնենք յերկինքն ի վեր.  
Վոր դրա մեջ միշտ լող տանք մենք.  
Աստղերից ել շատ հարկ առնենք...  
Ըմպելիք բեր դե'ն շուտ դու ինձ, —  
Յերկինք, գետին իմ են նորից:  
Գուգոռում եր Թարխանն եսպես,  
Նարգիզն հանկարծ, մտնում ե ներս:  
Շունն ու չոբան, Ելդարը քաջ,  
Հինգ ըմբիշներ իր հետն առած:  
Խումար, Յըլդըզ, ապստամբներ.  
Զեռներին թուր, սուր ու զենքեր,  
Մտնում մեկ-մեկ նրանք պալատ—  
Հերոսներն եղ, հաղթ ու հալարտ:

Նարգիզն ասաց. —Ո՞ ո՞ Թարխան,  
Արյունարբու, ժանտ ու դաժան.  
Սուլթան եյիր մի քիչ առաջ,  
Շուրջ խեղճի լաց ու հառաչ. .  
Ել վրկություն չունե՞ս հիմա,  
Ճանկերումն ես իմ այս հիմա...  
Տեսնում ես դու ես խեղճերին,  
Վորոնք գերի բո մտրակին,  
Տանջվում եյին գիշեր-ցերեկ,—  
Ու տառապում, լալիս բեկ-բեկ...  
Հիմա սրանք յելել քո դեմ,  
Ու քեզ նման ոձերի դեմ,  
Պիտի պատժենք խան ու բեզին,  
Վերջ տանք պիտի ձեր ամենքին...

## XVIII

Այս իրիկուն ո՞ Թարխանը,  
Վեզիր, Վեքիլն ու Ասլանը,  
Կալվածատեր, բեգ ու խաներ,  
Արյունարբու վոնց գաղաններ...  
Ի մի անցած վողջ միասին, —  
Մեկիկ-մեկիկ մորթոտվեցին...  
Բոնության վերջն եսպես նրանք,—  
Հասկացան ու ընկան թալակ:



Baş Mətbuat Mədiriliği Myvəkkilliği № 9575. Sifariş № 185  
 Tıraż 4000. İstehsalata verilmiş 3/II-35. Capa imzalanmış  
 21/IV-35. Cap 11st 3. Kaqız formatı 72×105. Azərnəşr mət-  
 bəəsində basıldı, 26-lar adına „Kitab Sarayı“ Bakı, Əli Baj-  
 ramov kycəsi.

di questi testi di più o meno  
quarant'anni fa. Ma il più  
notabile è che non solo  
non si sente nulla della  
scrittura antica, ma an-



ՀՀ Ազգային գրադարան



NL0376488

73.885

